ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

374 10 553310/116
+37493464789 gagik.ktryan@sportedu.am www.sportedu.am Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0070, Ա. Մանուկյան 11

ՀՖԿՍՊԻ ՆՈՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Ներածություն 3
Նոր ընդունված ուսանողների հարցման արդյունքների վերլուծություն 4
Եզրակացություն 12
Առաջարկություններ 14

Ներածություն

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի» Որակի ապահովման բաժինը 2025–2026 ուսումնական տարում իրականացրել է հարցում, որի նպատակն է գնահատել առաջին կուրսի ուսանողների տեղեկացվածության մակարդակը, համալսարանի ընտրության դրդապատճառները և ուսումնական միջավայրի վերաբերյալ նրանց ակնկալիքները: Հարցումն իրականացվել է էլեկտրոնային եղանակով՝ **Google Forms** հարթակի միջոցով: Հարցումն եղել է **անանուն**, ինչը թույլ է տվել ուսանողներին ազատ արտահայտել իրենց կարծիքը և առաջարկությունները:

Հարցմանը մասնակցել է ընդհանուր **240 ուսանողից 136-ը**, ինչը կազմում է մոտավորապես **57%**: Այս մասնակցության մակարդակը բավարար է, որպեսզի ստացված արդյունքները համարվեն ներկայացուցչական և արտացոլեն ուսանողների ընդհանուր պատկերացումները:

Հարցաթերթիկը կազմված էր **12 հարցից**, որոնց մի մասը փակ էր՝ բազմընտրանի կամ սանդղակային պատասխաններով, իսկ մյուս մասը բաց՝ ազատ կարծիքների և առաջարկությունների հավաքագրման համար: Այս կառուցվածքը թույլ է տալիս համադրել ինչպես քանակական (թվային և տոկոսային), այնպես էլ որակական (բացահայտված թեմաներ և միտումներ) վերլուծության մեթոդները:

Վերլուծության արդյունքները ներկայացված են ստորև.

Նոր ընդունված ուսանողների հարցման արդյունքների վերլուծություն

(Հարցվողներ մասին ընդհանուր տվյալներ)

Գծապատկեր 1.



Հարցմանը մասնակցած 136 ուսանողներից սեռային բաշխվածությունը հետևյալն է. **79.4% արական** և **20.6% իգական**: Տվյալները ցույց են տալիս, որ առաջին կուրսում ուսանողների մեծամասնությունը կազմում են տղաները, ինչը բնական է հաշվի առնելով ինստիտուտի մասնագիտական ուղղվածությունը:

Գծապատկեր 2.



Տարածքային պատկանելիության վերլուծությունը ցույց է տալիս, որ հարցման մասնակիցների 36%–ը, եկել է Երևանից: Արդյունքների համաձայն՝ հաջորդ խմբերը ներկայացված են Արմավիր մարզից (14%) և Կոտայքի մարզից (13.2%): Արարատի մարզից ուսանողների թիվը կազմում է 8.1%, իսկ Շիրակի և Լոռու մարզերից մասնակիցները միասին կազմում են մոտավորապես 7~8%: Մնացած մարզերը (Արագածոտն, Գեղարքունիք, Սյունիք, Տավուշ) ներկայացված են համեմատաբար փոքր թվով ուսանողներով:

Գծապատկեր 3.

3.Աշխատո՞ւմ եք այժմ

136 ответов



Ինչպես երևում է գծապատկերից հարցմանը մասնակիցներից 69.1%-ը չի աշխատում, 27.9%-ը աշխատում է: Իսկ մնացած 4–ը պատասխանել են, որ մասամբ են աշխատում, այսինքն ամսվա մեջ մի քանի օր կամ շաբաթ, կիրակի:

(Բուն հարցեր)

Գծապատկեր 4.

4.Ձեր ֆակուլտետը

136 ответов

Առաջին կուրսի հարցման մասնակիցներից 72.8%–ը Մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանողներ են, 27.2%–ը՝ Առողջարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետից:

Գծապատկեր 5.



Գծապատկերից երևում է որ,հարցման մասնակիցներից մեծամասնություն են կազմում կինեզիոլոգիա (19 ուս.) և աթլ. , լող, ս/պ, շ/մ, հրաձ, (19 ուս.), վ/բոլ, բ/բոլ, հ/բոլ, ս/թեն, (18 ուս.), մասնագիտությունների ուսանողները: Փոքր թվաքանակ են կազմում փրկարարական գործ (16 ուս.), ֆուտբոլ (16 ուս.), բռնցք., ծ/մ (15 ուս.), մ/մ, ֆիթնես (13 ուս.), հ/հ, ձ/դո, ս/բո (12 ուս.), մասնագիտությունները: Ավելի փոքր թվաքանակ են կազմում ՖԴԱՖԿ (4 ուս.), ա/ոճ, կ/դո, թ/դո (4 ուս.), լրագրություն (4 ուս.), մասնագիտությունները:

Գծապատկեր 6.



Այս գծապատկերը ցույց է տալիս, թե ինչու են ուսանողները ընտրել տվյալ մասնագիտությունը: Մասնակիցները նշել են տարբեր շարժառիթներ՝ անձնական հետաքրքրությունից մինչև կարիերայի աճի նպատակներ:

Հիմնական պատճառներն են.

- **Սպորտի հանդեպ սեր և հետաքրքրություն ունեմ (պ. 1)**
- **Մանկուց զբաղվել եմ սպորտով և ուզում եմ շարունակել մասնագիտորեն (պ. 2)** Այս երկու պատճառներն ընդգրկում են պատասխանների մեծ մասը՝ մոտ **70–75%**, ինչը ցույց է տալիս, որ ուսանողների ընտրությունը նպատակային է:

Հաջորդ կարևոր շարժառիթն է **մասնագիտության պահանջարկն ու գործնական հնարավորությունները (պ. 5)**:

Համեմատաբար քիչ տոկոսով են նշվել արտաքին ազդեցությունները՝ **ընկերների կամ ընտանիքի խորհուրդը**, ինչպես նաև երկրորդական մոտիվացիաներ (նոր փորձ ձեռք բերելու կամ պարզապես շարունակելու ցանկություն):

Գծապատկեր 7.



Հիմնական աղբյուրը՝ ընկերներ/ծանոթներ են, հարցվողների մոտ 48%–ը տեղեկացել է ընկերների և ծանոթների միջոցով:Իսկ (22.1%) ընտանիքի անդամների միջոցով, (17.6 %)–ը՝ մարզիչների և ուսուցիչների: Մնացած աղբյուրներից ինչպիսիք են՝ սոցցանցեր, լրատվամիջոցներ, ինստիտուտի պաշտոնական կայք, շատ ցածր տոկաոս են կազմում:

Գծապատկեր 8.



Հարցման մասնակիցներից մոտ 75–ը նշել են այս ինսիտուտը ընտրելու հիմնական պատճառը՝ Սպորտային մասնագիտություն ստանալը: Սա ցույց է տալիս, որ մեծ մասը նպատակաուղղված ընտրել է այս բուհը՝ որպես մասնագիտական կարիերայի հիմք: Երկրորդ տեղում է (Կարիերա աճ կտա ինձ) (մոտ 50), ինչը վկայում է անձնական աճի ցանկության մասին: Հետաքրքիր է, որ ընկերների կամ ծնողների խորհուրդը (մոտ 40) նույնպես զգալի ազդեցություն է ունեցել որոշման վրա: Մնացած պատճառները՝ (ֆիզիկական պատրաստվածության զարգացում), (հետաքրքրություն ոլորտի հանդեպ), (վարկանիշային հաստատություն)՝ զգալիորեն քիչ են նշվել:

Գծապատկեր 9.



Գծապատկերից երևում է, որ ուսանողների գլխավոր ակնկալիքը՝ գիտելիքն է : Հարցվողների ավելի քան կեսը (52.2%–ը) առաջնահերթ ակնկալում է տեսական և մասնագիտական գիտելիքներ: Երկրորդ տեղում՝ դիպլոմը, (28.7%–ը) ուսանողների համար ամենակարևորը հենց մասնագիտական դիպլոմը ստանալն է: Փոքր, բայց նշանակալի խումբ (11%–ը) ակնկալում է պրակտիկա կամ աշխատանքային հմտությունների զարգացում:

Գծապատկեր 10.

10.Գնահատեք ընդունելության քննության բարդությունը:



Հարցմանը մասնակցած ուսանողներից (39%–ը) ընդունելության քննության բարդությունը գնահատել է 3 միավորը, ինչը ցույց է տալիս, որ բարդությունը միջին մակարդակի է: 39.7%–ը (31+23) ուսանող գնահատել է ցածր՝ 1 կամ 2 միավոր, ինչը վկայում է, որ ընդհունելության քննության բարդության նկատմամբ գոհունակությունը շատ ցածր է: Միայն 21.4%–ն (13+16) է որ գնահատել է բարձր՝ 4 կամ 5 միավորով, ինչը նշանակում է, որ բարդ է ընդունելության քննությունները:

Գծապատկեր 11.

11. Գնահատեք քննությունը ընդունող հանձնաժողովի կատարած աշխատանքը:



Գրաֆիկից երևում է, որ պատասխանողների մեծ մասը (64.7%) ընտրել են ամենաբարձր գնահատականը՝ 5, ինչը վկայում է բարձր գոհունակության կամ դրական վերաբերմունքի մասին քննությունը ընդունող հանձնաժողովի մասին: Միջին և ցածր գնահատականներ (1–3) տվել է ընդամենը 25 մարդ,որը կազմում է մոտ 18.4%–ը (3.7+2.2+12.5): 4 և 5 գնահատականների ընդհանուր բաժինը կազմում է 81.6% (16.9+64.7), ինչը բարձր ցուցանիշ է և ցույց է տալիս ընդհանուր գոհունակություն:

Ուսանողների առաջարկություններ

12. Ձեր առաջարկությունները:

25 responses

Չունեմ

Chunem arajarkutyun

Գոհ եմ ամեն ինչից

Այժմ չունեմ

Լոխ լավա

Բուֆետի առկայությունը, կազմակերպվեն արշավներ

բարեհամբյուր լինեն որ չհիասթափվենք

Լիֆտի վերանորոգում

Աղբամանների տեղադրում,սենյակների օդորակիչների տեղադրում:

Աղբամանների տեղադրում,սենյակների օդորակիչների տեղադրում:

chka

Ծխելու տեղեր հատկացրեք համալսարանի տարածքում

Չկան

Chunem arajark

xorhurd ktam canotneris aycelen stex

Chka

Չունեմ առաջարկ

Cher xangari aveli barehamuyr shbumy dasaxosneri koxmic

Cher xangari aveli barehamuyr shbumy dasaxosneri koxmic

Ամեն ինչ իդեալական ա

Ոչ մի առաջարկ չունեմ,լավ աշխատանք եք կատարում,ապրեք

Պարային դահլիճ Հայլիով❤️😕

25 մասնակիցներից մեծ մասը պատասխանել է, որ առաջարկություն չունի կամ գոհ է: Միայն մի քանիսն են տվել կոնկրետ բարելավման առաջարկներ:

1. Առաջարկություն չունեն / գոհ են (մոտ 70%)

Պատասխաններ՝

- Չունեմ / Chka / Chunem / Այժմ չունեմ / Չունեմ առաջարկ
- Գոհ եմ ամեն ինչից
- Ամեն ինչ իդեալական ա
- Լավ աշխատանք եք կատարում, ապրեք
- Լոխ լավա

Այս խմբի պատասխանները ցույց են տալիս, որ ուսանողների մեծ մասը **գոհ է առկա պայմաններից**:

2. Կոնկրետ առաջարկներ բարելավման համար (մոտ 30%)

Պատասխաններ՝

- Բուֆետի առկայություն, կազմակերպվեն արշավներ
- Բարեհամբույր լինեն, որ չհիասթափվենք
- Լիֆտի վերանորոգում
- Աղբամանների և օդորակիչների տեղադրում սենյակներում
- Ծխելու տեղեր հատկացրեք համալսարանի տարածքում
- Դասախոսների կողմից ավելի բարեհամբույր վերաբերմունք
- Պարային դահլիճ Հայլիով

Այս առաջարկները հիմնականում վերաբերում են՝

- **Կենսապայմանների բարելավմանը** (լիֆտ, օդորակիչ, աղբամաններ, պարային դահլիճ, բուֆետ)
- **Կազմակերպչական և սոցիալական միջավայրին** (արշավներ, բարեհամբույր վերաբերմունք)

Պատասխանների մեծ մասը դրական է՝ գոհունակություն և վստահություն հաստատության աշխատանքի նկատմամբ: Միևնույն ժամանակ, մի քանի ուսանողներ բարձրաձայնել են կենցաղային և միջավայրային բարելավումների անհրաժեշտություն, որոնք կարող են նպաստել ուսանողական կյանքի որակի բարելավմանը:

Եզրակացություն

Հարցման արդյունքները, որոնք ընդգրկել են առաջին կուրսի 136 ուսանողների (ընդունվածների շուրջ 57%-ը), հնարավորություն են տալիս ստանալ համապարփակ պատկեր ինստիտուտի առաջին կուրսի ուսանողների սոցիոդեմոգրաֆիկ կազմի, մոտիվացիաների, ակնկալիքների և գոհունակության մասին:

1. Սեռային բաշխվածություն.

   Ուսանողների ճնշող մեծամասնությունը (79.4%) արական սեռի է: Սա պայմանավորված է ինստիտուտի մասնագիտական բնույթով՝ ֆիզիկական կուլտուրա և սպորտ, որտեղ գերակշռում են տղամարդիկ:

2. Տարածքային պատկանելիություն.

   Ուսանողների մոտ 36%-ը Երևանից է, իսկ մնացածը՝ հիմնականում Արմավիր, Կոտայք և Արարատ մարզերից: Սա ցույց է տալիս, որ ինստիտուտը ունի հանրապետության մակարդակով ընդգրկուն ցուցանիշներ, սակայն մարզերից ներգրավվածությունը դեռևս սահմանափակ է:

3. Աշխատանքային զբաղվածություն.

   ՈՒսանողների 69%–ը չեն աշխատում, ինչը բնորոշ է առաջին կուրսի ուսանողներին: Միևնույն ժամանակ, գրանցվել է նաև աշխատող կամ մասամբ աշխատող ուսանողների խումբ (մոտ 30%), ինչը վկայում է որոշ սոցիալ–տնտեսական բեռի կամ ինքնուրույնության դրսևորման մասին:

4. Ֆակուլտետային և մասնագիտական բաշխվածություն.

   Ուսանողների մեծ մասը (72.8%–ը) սովորում է Մարզչամանկավարժական ֆակուլտետում, ինչը հաստատում է մարզչական ուղղվածության գերակայությունը: Առողջարական տեխնոլոգիաների և կառավարման ֆակուլտետը ներկայացված է 27.2%-ով, ինչը նշանակում է, որ կինեզիոլոգիա, աթլետիկա/լող/սպորտային պարերը, վոլեյբոլ/բասկետբոլ/հանդբոլ, մարզաձևերի նկատմամբ ևս հետաքրքրությունը մեծ է:

5. Հստակություն մասնագիտության ընտրության մեջ.

   Ուսանողների հիմնական շարժառիթը՝

- սպորտի հանդեպ սեր,
- Մանկուց զբաղվել են սպորտով և ուզում են շարունակել մասնագիտորեն: Այս գործոնները ընդգրկում են շուրջ 70–75% պատասխանները: Հետևաբար, ուսանողները բուհ են ընդունվել ոչ թե արտաքին ճնշման, այլ ինքնաճանաչման և հետաքրքրության հիման վրա:

6. Տեղեկացման աղբյուրներ.

   Ուսանողների գրեթե կեսը (48%–ը) տեղեկացել է ինստիտուտի մասին ընկերների և ծանոթների միջոցով, իսկ մարկետինգային ու թվային հարթակների օգտագործման դերը համեմատաբար թույլ է :

7. Ընդունելության քննությունների բարդության գնահատում.

   Ուսանողների զգալի մասը (մոտ 40%) գնահատել է ընդունելության քննության բարդությունը ցածր (1 կամ 2 միավոր): Սա վկայում է, որ քննությունները հիմնականում ընկալվել են որպես հասանելի և ոչ դժվար, սակայն միաժամանակ կարող է մատնանշել դրանց բովանդակային կամ գնահատման թեթևությունը:

8. Ակնկալիքներ բուհից.

   Հարցվողների 52%–ը ակնկալում է առաջին հերթին գիտելիք և մասնագիտական պատրաստվածություն ստանալ, իսկ 29%–ը՝ դիպլոմ:

   Գոհունակության մակարդակ.

   Հարցվողների 81.6%-ը բարձր (4 կամ 5 միավոր) գնահատականներ են տվել բուհի քննությունները ընդհունող հանձնաժողովի վերաբերյալ հարցին, ինչը վկայում է ընդհանուր բարձր գոհունակության և վստահության մասին:

9. Առաջարկություններ.
   Ուսանողների 70%-ը նշել է, որ գոհ է ամեն ինչից: Մնացած 30%-ը տվել է կոնկրետ առաջարկներ, որոնք հիմնականում վերաբերում են՝

- կենցաղային պայմանների բարելավմանը (լիֆտ, բուֆետ, օդորակիչներ, աղբամաններ),
- սոցիալական միջավայրի հարստացմանը (արշավներ, պարային դահլիճ),
- մարդկային փոխհարաբերություններին (բարեհամբույր վերաբերմունք դասախոսների կողմից):

Առաջարկություններ

Հիմնվելով վերլուծության և եզրակացության վրա՝ կարելի է ձևակերպել հետևյալ բարելավման առաջարկությունները.

1. Կրթական և մասնագիտական գործընթացների ուղղությամբ

- Զարգացնել գործնական հմտությունների ձևավորման հնարավորությունները՝ ավելացնելով **պրակտիկ պարապմունքների**, մարզումների և համագործակցային նախագծերի բաժինը:
- Ավելացնել **մասնագիտական հաղորդակցման և կարիերայի ուղղորդման դասընթացներ**, քանի որ ուսանողների մի մասը նշում է կարիերայի աճի ակնկալիք:
- Վերանայել ընդունելության քննությունների չափանիշները՝ ապահովելու համար դրանց **հավասարակշռված բարդությունը և արդար գնահատումը**:

2. Միջավայրի և ուսանողական կյանքի ուղղությամբ

- Բարելավել **ինստիտուտի ֆիզիկական միջավայրը**՝ վերանորոգել լիֆտը, ապահովել բուֆետ, աղբամաններ և օդորակիչներ:
- Ստեղծել **հանգստի և սոցիալական շփման գոտիներ**, ինչպես նաև կազմակերպել **արշավներ և սպորտային միջոցառումներ**, ինչը կբարձրացնի ուսանողների թիմային ոգին և պատկանելիության զգացումը:

3. Տեղեկատվական և մարկետինգային ուղղությամբ

- Քանի որ 48% ուսանող ինստիտուտի մասին տեղեկացել է ոչ պաշտոնական ճանապարհով, անհրաժեշտ է **ուժեղացնել թվային հաղորդակցությունը**՝ կայքէջի, սոցիալական մեդիայի և բաց դռների օրերի միջոցով:
- Ակտիվացնել **դպրոցների, մարզիչների և մարզական կազմակերպությունների հետ կապերը**՝ ապահովելով թիրախային տեղեկատվական հոսք:

4. Կազմակերպչական և հաղորդակցման միջավայրի ուղղությամբ

- Կազմակերպել դասախոսների համար **սերվիսային հաղորդակցության կարճ դասընթացներ**, որպեսզի ուսանողների հետ փոխհարաբերությունները լինեն առավել բարեհամբույր և խրախուսող:
- Հաստատել մեխանիզմ ուսանողական առաջարկների պարբերական հավաքագրման համար՝ օրինակ **առցանց ձևաթուղթ կամ QR–հղում**:

ընդհանուր գնահատական.

Առաջին կուրսի ուսանողները մեծ մասամբ գոհ են ինստիտուտի կրթական և կազմակերպչական միջավայրից: Նրանց մոտիվացիան հիմնականում դրական է և հիմնված է անձնական հետաքրքրության վրա: Միևնույն ժամանակ, ուշադրության կարիք ունեն կենցաղային պայմանների և հաղորդակցական միջավայրի բարելավումը, ինչպես նաև թվային ինֆորմացիոն քաղաքականության ուժեղացումը: